Ճանաչի՛ր ինքդ քեզ

Կրթություն

Շաբաթաթերթ «Krtutiun» (education) weekly «Кртутюн» (образование) еженедельник 10.03.2021թ. Հորեքշաբթի թիվ 11 (984)

Շնորհավո՛ր ձեր տոնը, սիրելի՛ կանայք

Սովորույթի եւ ավանդույթի միջեւ

Այն, որ **Մարտի 8**-ը մայրիկների տոնն է, գիտեին Խորհրդային միության բոլոր երեխաները: Եվ բոլոր հայրիկներն այդ օրը նվերներ էին գնում մայրիկների համար... **Կանանց միջազգային օրը**՝ Մարտի 8-ը, նշվում էր բոլոր սոցիալիստական երկրներում եւ համարվում էր ոչ աշխատանքային օր:

«Կոպենհագենում 1910-ին կայացած սոցիալիստ կանանց միջազգային կոնֆերանսում Կլարա Ցետկինի առաջարկությամբ որոշում է ընդունվել այդուհետեւ մարտի 8-ը նշել կանանց միջազգային օր», - կարդում ենք Հայկական սովետական («կանաչ») հանրագիտարանում... Ի դեպ, **Մարիամ Աստվածածնի Ավետման** մասին այստեղ որեւէ հղում չկա:

Խորհրդային միության եւ սոցիալիստական համակարգի երկրներում 70 տարի սովորությունը ամրագրված էր բոլոր ընտանիքներում եւ Նոր տարվա տոնին համազոր նշվում էր յուրատեսակ ջերմությամբ եւ շքեղությամբ: Իհարկե, շքեղությամբ զիջելով, բայց ջերմությամբ գերազանցելով Խորհրդային գլխավոր՝ Նոյեմբերյան տոնին:

Կազմալուծվեց Խորհրդային Միությունը, դրանից էլ առաջ՝ սոցիալիստական երկրների համակարգը: Հայաստանն Անկախության հռչակվեով վերհաստատեց իր ինքնիշխանությունը եւ ձեռնամուխ եղավ անկախ պետականության վերականգնմանը: Փոփոխությունները բնական, օրինաչափ եւ անհրաժեշտ էին նաեւ պետական տոնացույցում: Վերարթնացած Մայիսի 28-ին միացան Սեպտեմբերի 21-ը, Հուլիսի 5-ը... Տոնացույցում իր պատվավոր տեղը գրավեց նաեւ Ապրիլի 7-ը՝ իբրեւ կանանց, մայրության, գեղեցկության եւ սիրո տոն... Ընտրված էր Մարիամ Աստվածածնի Ավետման օրը: Սակայն 2000-ամյա ավանդույթը չկարողացավ հաղթահարել 70-ամյա սովորույթը...

Լավ էր, թե վատ, մեզանում դարձյալ Մարտի 8-ը շարունակվեց նշվել՝ որպես կանանց տոն, եւ Հայաստանի խորհրդարանը, իբրեւ կանանց պաշտոնական տոն, ինչպես Խորհրդային ժամանակներում, կրկին նախընտրեց Մարտի 8-ը՝ իր նախկին ձեւակերպմամբ՝ Կանանց միջազգային տոն, հայտարարելով այն ոչ աշխատանքային օր: Խորհրդարանը, միաժամանակ, տոնացույցում թողեց նաեւ **Ապրիլի 7-ը՝ իբրեւ Մայրության եւ գեղեցկության տոն**... Այդպես ծնունդ առավ *«Կանանց միամսյակը»*:

Լավ է, թե վատ, 70-ամյա սովորույթի եւ 2000-ամյա ավանդույթի միջեւ, դեռեւս նախապատվությունը պետականորեն առաջինին տալով, բայց նույնքան, գուցե եւ ավելի ջերմությամբ նշելով նաեւ երկրորդը, կանանց միամսյակին եւ ընդհանրապես տարվա բոլոր օրերին սիրով ենք մեծարում մեր կանանց, մայրերին, քույրերին եւ աղջիկներին՝ նրանց մաղթելով երջանկություն կյանքի բոլոր օրերին:

Գ.Մ.

Շնորհավորանքի խոսք

Սիրելի՛ կանայք,

Շնորհավորում եմ՝ Կանանց միջազգային օրվա՝ գարնանային այս գեղեցիկ տոնի կապակցությամբ:

Թող այս գարնանային տոնը բերի զարթոնք, ուրախություն, անցած բարդ ու դժվարին օրերից հետո տիրի հույս ու հավատ, խաղաղ երկինք ու կայունություն:

Մաղթում եմ առողջություն, համբերություն ու բարեկեցություն:

Գրիգոր ՂԱՐԻԲՅԱՆ
ԿԳՄՍ աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ

ՀՀ ԿԳՄՍ նախարար Վահրամ ԴՈՒՄԱՆՅԱՆԻ շնորհավորական ուղերձը՝ Մարտի 8-ի առթիվ

Սիրելի՛ կանայք, աղջիկներ,

Այսօր Հայաստանում եւ բազմաթիվ երկրներում նշվում է Կանանց միջազգային օրը: Ջերմորեն շնորհավորում եմ բոլորիդ գարնանաշունչ այս տոնի կապակցությամբ:

Ձեր սերն ու հոգատարությունը, բարությունն ու քնքշությունն աշխարհն ավելի լավն են դարձնում, մեղմում են դժվարություններն ու օրհասական խնդիրները: Անուրանալի են ձեր դերն ու ջանասիրությունը՝ ուղղված մեր հայրենիքի բարօրությանը, սերունդների կրթադաստիարակչական հսկայական աշխատանքին, արժանապատիվ եւ ազգային արժեքներով ապրող քաղաքացի կրթելուն:

Շնորհակալ ենք ձեզ անվերապահ աջակցության, նվիրումի եւ տարբեր ոլորտներում հայրենանվեր գործունեության համար: Դուք մեր կրթական ոլորտի վստահելի հենքն եք, ձեզնով արվեստն ու մշակույթն ավելի են բյուրեղանում, իսկ մարզական հաղթանակներն ու նվաճումները հպարտանալու շարունակական առիթներ են:

Մաղթում եմ ձեզ երջանկություն, ստեղծելու եւ արարելու անսպառ եռանդ, սեր եւ ջերմություն:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորական ուղերձը՝ Մարտի 8-ի՝ Կանանց տոնի առթիվ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնությունն ու ջերմ բարեմաղթանքներն ենք բերում տիկնանց եւ օրիորդներին՝ մարտի 8-ի տոնական առիթով:

Անփոխարինելի է կնոջ դերը ընտանիքի ամրության, քրիստոնեական արժեքներով եւ հայրենյաց ավանդներով մեր զավակներին կրթելու գործում: Կանայք անձնուրաց նվիրումի, սիրո ու քնքշանքի մարմնացումն են մեր կյանքում:

Հետպատերազմյան այս դժվարագույն օրերին, երբ մեր երկիրը շարունակում է փոթորկվել ներքին ու արտաքին մարտահրավերներից, վստահությունն ունենք, որ մեր ժողովուրդը վերստին իր խաչի ճանապարհը պիտի հասցնի մինչեւ հաղթական հարություն:

Սիրելի՛ մայրեր եւ քույրեր, Մեր մաղթանքն է, որպեսզի դուք հույսի ու մխիթարության մեջ դիմավորեք մեծարանքի այս տոնը: Աղոթում ենք, որ Տերը Սուրբ Հոգու սփոփանքը պարգեւի պատերազմի ծանր կորուստների միջով անցած մեր մայրերին ու քույրերին, ուժ ու կորով հաղորդի համայն մեր ժողովրդին՝ համակամ սիրով կերտելու լուսավոր ու բարօր կյանքը հայրենիքի: Թող Բարձրյալ Տերը Իր Ամենախնամ Սուրբ Աջի հովանու ներքո պահի ու պահպանի ձեզ ամենքիդ եւ բյուր օրհնություններով շնորհի արեւշող կյանքի խաղաղ եւ երջանիկ օրեր, լուսավոր ու պայծառ նոր իրագործումներ, այսօր եւ միշտ. ամեն:

Համագործակցություն

Նոր միասնական ծրագրակազմ

ՀՀ ԳԱԱ ինֆորմատիկայի եւ ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի ու Սամարայի Ս. Պ. Կորոլյովի անվան ազգային հետազոտական համալսարանի գիտահետազոտական խմբերը համատեղ մշակելու են նոր միասնական ծրագրակազմ, որը թույլ կտա դաշտային պայմաններում ինքնավար կերպով վերլուծել արբանյակներից կամ անօդաչու թռչող սարքերից ստացված թվային պատկերները՝ առանց մարդու միջամտության եւ առանց ցամաքային համակարգչային սարքավորումների, նեյրոնային ցանցերի ու տվյալների բազաների ներգրավման:

«Պատկերների տեքստուրային հատկությունների հետ համաձայնեցված ինֆորմատիվ հայտանիշների հավաքակազմի ձեւավորման արդյունավետ հաշվողական ընթացակարգերի կառուցում» գիտահետազոտական ծրագիրը մեկնարկել է այս տարվա հունվարին եւ ֆինանսավորման է երաշխավորվել *«ՀՀ ԿԳՄՍՆ ԳԿ-ՀՀՌՀ-2020»* միջազգային մրցույթի արդյունքում, որն իրականացվել է Գիտության կոմիտեի եւ Հիմնարար հետազոտությունների ռուսաստանյան հիմնադրամի (ՌՖՖԻ) համատեղ ծրագրերի աջակցությամբ:

«Հետազոտության արդյունքում նպատակ ունենք տեքստուրաների համապարփակ մաթեմատիկական նկարագրության շնորհիվ մշակել ալգորիթմներ, որոնք թույլ կտան ապահովել թռչող սարքերից, արբանյակներից ստացված պատկերների վերլուծությունը ոչ թե այլ պատկերների հետ համեմատության, նեյրոնային ցանցերի եւ բարդ դասակարգիչների միջոցով, ինչպես դա արվում է ներկայում, այլ տվյալ պատկերի տեքստուրայի ինքնավար ճանաչման եւ դասակարգման հիման վրա: Տեքստուրա ասելով՝ նկատի ունենք տվյալ տեղանքի առանձնահատկությունները՝ բուսականությունը, ջրային ծածկույթը, ռելիեֆը, իսկ բժշկական կիրառության դեպքում՝ տվյալ օրգանի կառուցվածքը, գոյացությունների առկայությունը եւ այլն»,- ասում է ծրագրի հայկական կողմի ղեկավար, պրոֆեսոր **Մարիամ Հարությունյանը**:

Խմբի անդամ, պրոֆեսոր **Դավիթ Ասատրյանի** խոսքով՝ հետազոտությունը լայն կիրառելիություն կունենա արբանյակային մշտադիտարկման եւ հեռահար զոնդավորման, բժշկական վաղաժամ ախտորոշման, անօդաչու սարքերն *«ինքնավար ուղեղով»* օժտելու եւ մի շարք այլ ուղղություններով:

Հայ-ռուսական համագործակցությունը տվյալ ոլորտում թույլ է տալիս կատարել աշխատանքի արդյունավետ համաձայնեցում՝ արբանյակային եւ տիեզերական հիպերսպեկտրային տեխնոլոգիաների ոլորտում առկա հսկայական տվյալների բազաները հասանելի դարձնելով հայ գիտնականների համար: Վերջիններս էլ ոլորտում մեծ փորձառության եւ կուտակված գիտելիքների շնորհիվ առաջարկում են իրենց մեթոդաբանությունն ու ալգորիթմները՝ նոր ինֆորմատիվ հայտանիշների հայտնաբերման համար:

Ծրագրի ռուսաստանյան կողմի հաղորդմամբ՝ երկկողմ համագործակցու-թյան արդյունքում ակնկալվող լուծումը լուրջ նախադրյալներ է ստեղծում թեթեւ անօդաչու թռչող սարքերի վրա տեղակայվող շարժական հիպերսպեկտրաչափերի ստեղծման համար: Ալգորիթմների օգտագործումը թույլ կտա ԱԹՍ-ների բորտային համակարգերի միկրոսխեմաների կիրառմամբ տեղում հաշվարկել խնդրո առարկա օբյեկտների ինֆորմատիվ հայտանիշները:

Հեղինե ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Խորհրդարան

Երկրորդ ընթերցմամբ ամբողջությամբ քննարկվել է *«Բարձրագույն կրթության եւ գիտության մասին»* օրենքի նախագիծը

Ազգային ժողովը երկրորդ ընթերցմամբ եւ ամբողջությամբ քննարկել է *«Բարձրագույն կրթության եւ գիտության մասին»* օրենքի եւ կից օրենսդրական փաթեթի նախագիծը, որը Խորհրդարանում ներկայացրել է ՀՀ ԿԳՄՍ նախարար **Վահրամ Դումանյանը**:

Նա անդրադարձել է այն փոփոխություններին, որոնք կատարվել են նախագծի՝ առաջինից երկրորդ ընթերցում ընկած ժամանակահատվածում: Նախարարը նշել է, որ նախկինում ռեկտորի ընտրության հարցում առաջարկվում էր ընտրանքային տարբերակ, երբ պետք է ներկայացվեր մինչեւ 3 թեկնածու, իսկ լիազոր մարմնի ղեկավարը երեքից մեկին նշանակեր այդ պաշտոնում: *«Տարբեր քննարկումների եւ առաջարկությունների ուսումնասիրության արդյունքում որոշում կայացվեց փոխել այդ դրույթը եւ առաջարկել հետեւյալ փոփոխությունը. ռեկտորն ընտրվում է խորհրդում՝ ցուցակային կազմի կեսից ավելի ձայն հավաքելու պարագայում եւ հրամանագրվում է լիազոր մարմնի ղեկավարի կողմից»*,- նշել է նա:

Երկրորդ փոփոխությունը, ըստ Վահրամ Դումանյանի, այն է, որ նախորդ տարբերակում նշվում էր, որ հոգաբարձուների խորհրդի նախագահը չի կարող զբաղեցնել այդ պաշտոնը երկու ժամկետ անընդմեջ. այժմ նախագահի պաշտոնավարման այդ սահմանափակումը հանվել է:

Հաջորդ փոփոխությունը վերաբերում է վարչական պաշտոն զբաղեցնողների համար սահմանված տարիքային վերին շեմին. նախորդ տարբերակում ամրագրված 65 տարեկանն առաջարկվում է դարձնել 70:

Ըստ նախարարի՝ առաջին ընթերցման տարբերակում ռեկտոր, ամբիոնի վարիչ, դեկան պաշտոնները վարչական էին. ներկա օրինագծով առաջարկվում է դրանք համարել ակադեմիական պաշտոններ: *«Այստեղ հարցեր էին առաջանում այդ պաշտոնի հավակնորդներին ներկայացվող պահանջների հետ կապված, մասնավորապես՝ ռեկտորի, դրա համար ընտրել ենք ավելի ճկուն եւ բուհերի ինքնավարությանն ավելի միտված դրույթ, այն է՝ բուհի ռեկտորին ներկայացվող պահանջները կսահմանվեն տվյալ բուհի կանոնադրությամբ, իսկ օրենքում կամրագրվի միայն գիտական աստիճանի առկայության պահանջը»*,- փաստել է նախարարը:

Փոփոխություն է տեղի ունեցել նաեւ բուհերի հավատարմագրման գործընթացում: Ըստ նախարարի՝ հաշվի առնելով բուհերի առաջարկները՝ ինստիտուցիոնալ եւ ծրագրային հավատարմագրման կարեւորագույն գործընթացում ընտրվել է ավելի պարզ եւ գործուն մեթոդ:

Նախարարը նաեւ նշել է, որ խորհրդի 9 անդամից 5-ը նշանակվելու են լիազոր մարմնի, 4-ը՝ բուհի կողմից՝ ներառյալ ուսանողական, դասախոսական եւ բուհի հետ համագործակցող գործարար համայնքը. *«Բուհն է որոշելու ինչ համամասնությամբ բաշխել այդ 4 տեղը, սակայն, եթե ինչ-ինչ պատճառներով սահմանված ժամկետում բուհը չի ներկայացնում համապատասխան անդամության թեկնածուներ, ապա լիազոր մարմինն այդ տեղերը լրացնում է իր հայեցողությամբ»*:

Ելույթից հետո պատգամավորները հարցեր են ուղղել ԿԳՄՍ նախարարին, որոնք վերաբերել են տարիքային շեմին, ռեկտորի ընտրությանը եւ ռոտացիայի կարգին:

Որպես հարակից զեկուցող՝ հանդես է եկել ԱԺ գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության եւ սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ **Հովհաննես Հովհաննիսյանը**. *«Բուհերի ակադեմիական ազատությունների իմաստով մենք բուհերին տվել ենք շատ լիազորություններ: Բուհերի ռեկտորների, գիտական համայնքի ներկայացուցիչների հետ կրկին հանդիպում է նախատեսվում»*:

Նախարար Վահրամ Դումանյանը, նշելով, որ ԱԺ գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության եւ սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի քննարկումների ընթացքում մի շարք պատգամավորների առաջարկություններ դեռ չեն քվեարկվել, առաջարկել է օրենքի նախագիծը կրկին տեղափոխել հանձնաժողով՝ առաջինից երկրորդ ընթերցման փուլ, որի ընթացքում կդիտարկվեն եւ հաշվի կառնվեն բոլոր առաջարկները:

Կառավարության հետ ձեռք բերված պայմանավորվածության համաձայն եւ հեղինակի առաջարկով՝ պատգամավորները դեմ են քվեարկել նախագծին: Այնուհետեւ 86 *«կողմ»* եւ 1 *«դեմ»* ձայնով ընդունվել է *««Բարձրագույն կրթության եւ գիտության մասին» եւ կից ներկայացված օրենքների նախագծերի փաթեթի քննարկումը գրավոր առաջարկների ներկայացման փուլ տեղափոխելու մասին»* ԱԺ որոշման նախագիծը:

Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Էրազմուս +

Քննարկվել են բարձրագույն կրթության երրորդ աստիճանի բարեփոխումները

«Դոկտորական կրթության բարեփոխումը Հայաստանում՝ ակադեմիական համայնքի, արդյունաբերության պահանջներին եւ ԵՄ փորձին համապատասխան» էրազմուս + կարողությունների զարգացման ծրագրի շրջանակում մեկնարկել է եռօրյա աշխատաժողով՝ *«Բարձրագույն կրթության երրորդ մակարդակի զարգացման հայեցակարգի եւ իրավական փաստաթղթերի մշակում»* խորագրով:

Միջոցառմանը մասնակցել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ **Կարեն Թռչունյանը**, ով, ողջունելով աշխատաժողովի մասնակիցներին, հիմնականում ներկայացրել է նախարարության տեսլականը՝ բարձրագույն կրթության երրորդ աստիճանի բարեփոխման վերաբերյալ: Նրա խոսքով՝ ոչ միայն Հայաստանում, այլեւ ողջ աշխարհում երրորդ մակարդակի կրթությունը համընդհանուր խնդիր է: *«Ներկայում Հայաստանում ընթանում են հետբուհական կրթության բարեփոխումներ, եւ մեր հիմնական քաղաքականությունն այն է, որ պետությունը պետք է խիստ պահանջներ ներկայացնի գիտական աստիճան շնորհելու հարցում: Ըստ նախարարության տեսլականի՝ շատ կարեւոր է ունենալ ուժեղ եւ որակյալ երրորդ մակարդակի կրթություն: Նախարարությունում իմ պաշտոնավարման առաջին օրն ասել եմ՝ «Խոսել քիչ, աշխատել շատ»: Եվ ես բոլորին խրախուսում եմ անել նույնը, քանի որ մեզ այս բարեփոխումները շատ արագ են անհրաժեշտ, եւ պետք է բոլոր քայլերը ժամանակին համընթաց լինեն»*,- նշել է նա:

շարունակությունը՝ էջ 3

Քննարկվել են բարձրագույն կրթության երրորդ աստիճանի բարեփոխումները

սկիզբը՝ էջ 2

Նա հավելել է, որ *«Բարձրագույն կրթության եւ գիտության»* մասին օրենքի նախագծով նախատեսվում է ներկայիս ասպիրանտական ծրագրերի աստիճանական փոփոխություն՝ դրանք բարձրագույն կրթության համակարգում ընդգրկելով որպես որակավորման երրորդ՝ դոկտորական աստիճան (PhD):

Աշխատաժողովի առաջին օրը ծրագրի ԵՄ գործընկերները ներկայացրել են դոկտորական կրթության միջազգայնացման փորձը Լիտվայի, Իտալիայի, Պորտուգալիայի եւ Ֆրանսիայի օրինակով: Ծրագրի անդամները՝ ՀՀ 8 բարձրագույն ուսումնական հաստատությունների եւ 2 գիտահետազոտական ինստիտուտների ներկայացուցիչներ՝ ինստիտուցիոնալ ղեկավարներ եւ հետազոտողներ, ներկայացրել են ծրագրի ընթացքում իրականացված հետազոտությունները, որոնց արդյունքում ձեւավորվել են դոկտորական կրթության բարեփոխման առաջարկները եւ հայեցակարգային լուծումները: Ներկայացված առաջարկները քննարկվել են առանձին աշխատանքային խմբերում՝ հստակեցնելով բարձրագույն կրթության երրորդ մակարդակի զարգացման եւ որակի ապահովման հայեցակարգի առանցքային դրույթները՝ Զալցբուրգի սկզբունքներին համահունչ:

Աշխատաժողովի երկրորդ օրը մասնակիցներին ողջունել է ՀՀ էկոնոմիկայի նախարար **Վահան Քերոբյանը**: Վերջինիս համոզմամբ՝ գիտությունը մեզանում որեւէ այլընտրանք չունի, քան զարգացումը՝ հենվելով տեխնոլոգիական առաջընթացի վրա: *«Ակնհայտ է, որ միայն այդ դեպքում մենք կարող ենք բարձրարժեք արդյունք ստեղծել Հայաստանում եւ, որպես փոքր երկիր, կկարողանանք ուժեղ տնտեսություն ունենալ, ինչպիսին, օրինակ, Իսրայելինն է, Շվեյցարիայինը եւ այն: Իմ պաշտոնավարման երեք ամիսների ընթացքում, երբ հերթական համագործակցությունը պետք է կայանար Կրթության գիտության,*

մշակույթի եւ սպորտի նախարարության հետ ասպիրանտական տեղերի պետպատվերի հատկացման նպատակով, մենք վերանայեցինք մոտեցումը. առաջարկեցինք բիզնեսին ներկայացնել ծրագրեր, որոնք պետք է հետազոտվեն, եւ արդեն իսկ կատարել ենք ընտրություն: Կարծում ենք՝ մեզ սպասվում են շարունակական եւ սերտ համագործակցություններ: Ակնհայտ է, որ գիտական միտքն օգնում է բիզնեսին, եւ հենց այս ուղղությամբ էլ մենք պետք է առաջ շարժվենք»:

Մշակվող հայեցակարգի հիման վրա ծրագրի շրջանակում կվերանայվեն նաեւ հետբուհական կրթության կազմակերպման իրավական փաստաթղթերը, որոնց հիման վրա էլ իրենց հերթին կվերանայվեն ինստիտուցիոնալ ընթացակարգերը, եւ պիլոտային տարբերակով կգործարկվեն դոկտորական դպրոցներ: Աշխատաժողովը կամփոփվի համագործակցային դոկտորական կրթական ծրագրերի կազմակերպման վերաբերյալ քննարկումների շարքով:

Նշենք, որ *«Դոկտորական կրթության բարեփոխումը Հայաստանում՝ ակադեմիական համայնքի, արդյունաբերության պահանջներին եւ ԵՄ փորձին համապատասխան»* ARMDOCT ծրագրի տեւողությունը 36 ամիս է. այն կգործի մինչեւ 2023 թվականը: ARMDOCT ծրագրի նպատակն է՝ Զալցբուրգի սկզբունքներին համահունչ Հայաստանում բարեփոխել դոկտորական կրթությունը՝ ազգային քաղաքականության եւ իրավական փաստաթղթերի, ինստիտուցիոնալ ընթացակարգերի վերանայման, գիտության եւ հետազոտության ինտեգրման համար անհրաժեշտ համակարգի ապահովման միջոցով: Ծրագրի նպատակներից է նաեւ՝ խթանել բուհերի եւ գիտահետազոտական ինստիտուտների, արդյունաբերական ոլորտի սերտ համագործակցությունը՝ ուղղված դոկտորական կրթության միջազգայնացմանը, Եվրոպական բարձրագույն կրթական տարածքին եւ Եվրոպական բարձրագույն հետազոտական տարածքին ինտեգրմանը:

Ծրագրի շրջանակում նախատեսվում են բուհերի եւ ԳԱԱ գիտահետազոտական ինստիտուտների, ԿԳՄՍ ռազմավարական, ենթակառուցվածքային եւ մարդկային ռեսուրսների կարողությունների զարգացում, իրավական փաստաթղթերի մշակում, դոկտորական կրթության կազմակերպման ձեռնարկի մշակում, ինչպես նաեւ դոկտորական 5 դպրոցների հիմնում եւ գործարկում՝ բուհերի, գիտահետազոտական ինստիտուտների ու արդյունաբերության միջեւ սերտ համագործակցության ապահովմամբ: Ծրագիրը ներառում է 15 անդամ, այդ թվում՝ 4 ԵՄ բարձրագույն ուսումնական հաստատություններ, ՀՀ 8 բուհ եւ 2 գիտահետազոտական ինստիտուտ, ինչպես նաեւ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը:

Հեղինե ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

«Կրթության բարելավում»

Մշտադիտարկման այցեր նախակրթարաններ

«Կրթության բարելավում» ծրագրի *«Դպրոցին երեխաների պատրաստվածության մակարդակի բարձրացում եւ կրթության հավասար մեկնարկային հնարավորությունների ապահովում»* ենթաբաղադրիչի շրջանակում ԿԳՄՍՆ *«Կրթական ծրագրերի կենտրոն»* ՕԻԳ-ի ներկայացուցիչները մշտադիտարկման այցեր են կատարել մայրաքաղաքի մի շարք դպրոցներում բացված նախակրթարաններ: Երեւանի թիվ 31, թիվ 60, թիվ 66, թիվ 20 եւ թիվ 186 հիմնական դպրոցներում նրանք ծանոթացել են իրականացված աշխատանքներին եւ երեխաների կրթության ու դաստիարակության համար ստեղծված պայմաններին:

Կարեւորելով երեխաների համար նախադպրոցական կրթության հնարավորություն ստեղծելու անհրաժեշտությունը՝ ՕԻԳ-ի ներկայացուցիչները փաստել են, որ *«Կրթության բարելավում»* ծրագրի շրջանակում հետեւողականորեն կյանքի կոչվող միկրոծրագրերը հարմարավետ պայմաններ են ապահովել ոչ միայն մայրաքաղաքի տարբեր համայնքների երեխաների համար, այլեւ հնարավոր է դարձել հոգալ այն երեխաների կրթական կարիքները, որոնք բնակվում են գյուղական համայնքներում, որտեղ առկա կամ հասանելի չեն նախադպրոցական հաստատություններ:

Դպրոցների տնօրենները իրենց հերթին կարեւորել են ծրագրի նշանակությունը սաների կրթության եւ դաստիարակության գործում՝ վստահեցնելով, որ ստեղծված պայմաններում ուսումնական գործընթացի արդյունավետությունը եւ որակը զգալիորեն բարձրացել են: Նրանց հավաստմամբ՝ համայնքների բնակիչները կարեւորում են նախակրթարանի դերը եւ ընդգծում, որ իրենց երեխաները հարմարավետ ու գեղեցիկ պայմաններում կրթություն ստանալու հնարավորություն ունեն:

Վերոնշյալ նախակրթարանները ստեղծվել են 2018 թ.-ին՝ *«Կրթական ծրագրերի կենտրոն»* ՕԻԳ-ի եւ վերոնշյալ կրթական հաստատությունների միջեւ կնքված դրամաշնորհային պայմանագրերով: Նախակրթարանները, որոնցից յուրաքանչյուրում ընդգրկված են 5 տարեկան 20-25 երեխաներ, դրամաշնորհային ծրագրերի իրականացման արդյունքում կահավորվել են ժամանակակից գույքով, սարքավորումներով, ապահովվել են մանկական գրականությամբ, ուսումնական նյութերով ու խաղալիքներով: Հաստատությունները լիցենզավորվել են, իրականացվել է նաեւ դաստիարակների վերապատրաստում: Նախակրթարաններն ունեն հարմարեցված պայմաններ, ինչի արդյունքում կրթություն են ստանում նաեւ սահմանափակ հնարավորություններով երեխաներ: Հավելենք, որ *«Կրթության բարելավում»* ծրագրի շրջանակում 2015 թվականից առ այսօր արդեն իսկ հիմնվել են 136 նախակրթարաններ:

Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Նոր կարգի համաձայն

Կստեղծվի գործուղվող մասնագետների շտեմարան

2021 թվականի հունվարից ուժի մեջ մտած սահմանամերձ կամ բարձրլեռնային բնակավայրերի պետական ուսումնական հաստատություններ մասնագետների գործուղման կարգի համաձայն՝ ԿԳՄՍ նախարարությունը պետք է ստեղծի եւ վարի գործուղվող մասնագետների շտեմարան:

Այն կստեղծվի կրթության կառավարման տեղեկատվական համակարգում (Emiss.am)՝ որպես առանձին ենթաբաժին, որտեղ կենտրոնացված կլինեն բոլոր մարզերից հավաքագրված տվյալները՝ գործուղման պահանջարկի եւ գործուղվելու ցանկություն ունեցող մասնագետների վերաբերյալ:

Նոր միասնական տեղեկատվական հարթակում ուսուցիչների չհամալրվող պահանջարկի վերաբերյալ տեղեկատվությունը պետք է մուտքագրեն մարզպետարանների համապատասխան ստորաբաժանումները: Սահմանամերձ կամ բարձրլեռնային համայնքներ գործուղվելու ցանկություն ունեցող մասնագետները հարթակի միջոցով կկարողանան էլեկտրոնային հայտ ներկայացնել եւ այդպիսով գրանցվել գործուղվող մասնագետների շտեմարանում:

ԿԳՄՍՆ Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի (ԿՏԱԿ) մասնագետները նոր տեղեկատվական հարթակի ստեղծման աշխատանքներն առաջիկայում կավարտեն, ինչից հետո այն կլինի հրապարակային:

Գործուղվող մասնագետների էլեկտրոնային շտեմարանի գործարկման ընդհանուր մոդելն ու աշխատանքի սկզբունքները ներկայացնելու նպատակով ԿԳՄՍ նախարարությունում նախարարի տեղակալ **Ժաննա Անդրեասյանի** գլխավորությամբ տեղի է ունեցել աշխատանքային քննարկում, որին մասնակցել են մարզպետարանների կրթության վարչությունների պատասխանատուները:

«Նոր կարգում բարելավումներ ենք նախատեսել սահմանամերձ եւ բարձրլեռնային համայնքների դպրոցներ գործուղվող ուսուցիչների համար՝ նրանց առաջարկելով աշխատավարձի հավելում եւ կոմունալ-կենցաղային խնդիրների լուծմանն ուղղված փոխհատուցումներ՝ հաշվի առնելով իրական շուկայական գները: Գործուղման քաղաքականության հիմքում դրված է մասնագետների շտեմարանի վարումը, որը թույլ կտա օպերատիվորեն լրացնել առաջացած թափուր տեղերը սահմանամերձ եւ բարձրլեռնային համայնքների դպրոցներում: Մենք նաեւ հույս ունենք, որ մասնագետների շտեմարանը կծառայի ընդհանրապես հանրակրթական դպրոցներում մասնագետների պահանջարկի բացի համալրմանը»,- նշել է Ժաննա Անդրեասյանը: Նա նաեւ տեղեկացրել է, որ մանկավարժական կադրերի պահանջարկը ձեւավորվում է միայն այն դեպքում, եթե մինչ այդ առնվազն 2 անգամ հայտարարված մրցույթի արդյունքներով ուսուցչի թափուր տեղը չի համալրվել:

շարունակությունը՝ էջ 4

Հայ-ռուսական համալսարան

«Գենային ճարտարագիտության, գենոմի խմբագրման եւ 3-րդ սերնդի սեքվենավորման» գերազանցության կենտրոն

Հայ-ռուսական համալսարանում կըգործի *«Գենային ճարտարագիտության, գենոմի խմբագրման եւ 3-րդ սերնդի սեքվենավորման»* կրթական եւ գիտական գերազանցության կենտրոն, որը ստեղծվում է Կենսաբժշկության եւ ֆարմացիայի ինստիտուտի հենքի վրա: Կենտրոնը կխթանի համալսարանի, այլ բուհերի, կենսաբժշկական ոլորտի գիտական եւ տեխնոլոգիական կազմակերպությունների զարգացումը, ազգային եւ միջազգային համագործակցությունը:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության եւ *«Կրթական ծրագրերի կենտրոն»* ՕԻԳ-ի ներկայացուցիչներն այցելել են բուհ՝ Հայաստանի բարձրագույն կրթության *«Նորարարությունների մրցակցային հիմնադրամի»* դրամաշնորհային ընթացիկ ծրագրի մշտադիտարկման նպատակով: Աշխատանքային խումբը շրջել է կենտրոնի համար առանձնացված տարածքներում, որտեղ տեղադրվել են ծրագրի շրջանակում ձեռք բերված կահույքը, լաբորատոր սարքավորումները եւ համակարգչային տեխնիկան: Միաժամանակ, բուհը ոչ գումարային ներդրումների շրջանակում տրամադրել է լաբորատոր սարքավորումներ ու նյութեր: Կենտրոնի ստեղծումն իրականացվում է դրամաշնորհային ծրագրով սահմանված փուլերի համաձայն:

Դրամաշնորհային ծրագրի կարեւոր բաղադրիչ է նաեւ կրթական բովանդակության ստեղծումը: Ծրագրի ղեկավար **Արսեն Առաքելյանը** նշել է, որ ընթացքում է *«Գենային ճարտարագիտություն»* երկլեզու մագիստրոսական ծրագրի իրականացումը կարգավորող փաստաթղթերի մշակման գործընթացը: Նրա խոսքով՝ այս փուլում վերանայվել եւ լրամշակվել է ՀՌՀ Կենսաբժշկության եւ ֆարմացիայի ինստիտուտում գործող *«Կենսաինժեներիա եւ կենսաինֆորմատիկա»* դիպլոմավորված մասնագետների պատրաստման կրթական ծրագիրը:

«Առկա կրթական ծրագրերում բարելավվել են մասնագիտական առարկաների ծրագրերը, եւ ներառվել են նոր գործնական առարկաներ: Այս ամենը թույլ կտա պատրաստել բարձրորակ մասնագետներ, որոնք ի վիճակի կլինեն բավարարել աշխատաշուկայում ծեւավորվող պահանջարկը»,- հավելել է նա՝ ընդգծելով, որ ընթացքում են նաեւ գենոմային ճարտարագիտության եւ սեքվենավորման դասընթացների, հետազոտական ուղեցույցների մշակման աշխատանքները:

Կարեւորելով բուհ-մասնավոր հատված գործնական կապը՝ Ա. Առաքելյանը հավաստիացրել է, որ առաջիկայում կենտրոնը կարող է լուծել կարեւոր խնդիրներ՝ առողջապահության եւ տնտեսության մի շարք ոլորտներում իրականացնելով հետազոտություններ եւ տեխնոլոգիական փորձարկումներ:

«Արդեն իսկ ծրագրի շրջանակում ձեռք բերված լաբորատոր սարքավորումներով Հայ-ռուսական համալսարանի Կենսաինժեներիայի, Կենսաինֆորմատիկայի եւ Մոլեկուլային կենսաբանության ամբիոնների, ՀՀ ԳԱԱ Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի Մարդու գենոմիկայի եւ իմունոմիկայի լաբորատորիայի ու Կենսաինֆորմատիկայի գիտական խմբի գիտաշխատողներն առաջին անգամ Հայաստանում իրականացրել են նոր կորոնավիրուսի 12 ամբողջական գենոմի վերծանում՝ 3-րդ սերնդի սեքվենավորման կիրառմամբ: Վիրուսի տարբերակների նույնականացման եւ գենոմում առկա մուտացիաների վերլուծության աշխատանքները դեռեւս ընթացքի մեջ են»,- փաստել է դրամաշնորհային ծրագրի ղեկավարը՝ հավելելով, որ գենոմիկան եւ գենոմի խմբագրումն արդեն իսկ սկսել են հեղափոխել կենսաբժշկությունը, կենսատեխնոլոգիաները եւ դեղագործությունը:

Ներկայում աշխատաշուկայում առկա է ոլորտի մասնագետների եւ մասնագիտացված գիտատեխնիկական կենտրոնների մեծ պահանջարկ, հետեւաբար, կենտրոնի առկայությունը ՀՌՀ-ին թույլ կտա դառնալ այդ գործընթացների մի մասը, ընդլայնել գենոմիկայի եւ գենոմի խմբագրման հետազոտությունները:

Հեղինե ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Կստեղծվի գործուղվող մասնագետների շտեմարան

սկիզբը՝ էջ 3

ԿՏԱԿ-ի տնօրեն **Արտակ Պողոսյանը** ներկայացրել է մշակվող հարթակի գործարկման մոդելը՝ նշելով, որ մարզպետարանների մասնագետների համար կկազմակերպվի նաեւ մասնագիտական դասընթաց: Նրանք շտեմարանում կմուտքագրեն տվյալներ՝ գործուղվող մասնագետների ամբողջական պահանջարկի վերաբերյալ, որը հասանելի կլինի Emis.am համակարգի համապատասխան ենթաբաժնում: Այսինքն՝ ցանկացած անձ, մուտք գործելով նշված հարթակ, կտեսնի, թե հեռավոր եւ բարձրլեռնային համայնքների դպրոցներում որ մասնագիտությամբ ուսուցչի թափուր հաստիքներ կան՝ քանի ժամ ծանրաբեռնվածությամբ, որքան աշխատավարձով, նաեւ կոմունալ ծախսերի եւ բնակվարձի փոխհատուցման համապատասխան չափերով: Ըստ այդմ՝ սահմանված չափանիշներին համապատասխանող մասնագետը կկարողանա էլեկտրոնային հայտ ներկայացնել՝ առաջարկվող թափուր տեղերից նշելով նախընտրելի դպրոցն ու հաստիքը:

Համաձայն Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի հրամանով հաստատված սահմանամերձ կամ բարձրլեռնային բնակավայրերի պետական ուսումնական հաստատություններ մասնագետների գործուղման կարգի՝ գործուղված մասնագետին լրացուցիչ կհատկացվի աշխատավարձի հավելում՝ 30 տոկոսի չափով, ինչպես նաեւ տեղափոխման տրանսպորտային ծախս նրա եւ ընտանիքի անդամների համար: Գործուղված մասնագետը կստանա նաեւ.

- *գույքի տեղափոխման տրանսպորտային ծախսերը մինչեւ 50 կիլոմետր ճանապարհի համար՝ 10000 դրամ, 50 կիլոմետրից ավելի յուրաքանչյուր 50 կիլոմետրի համար՝ 8000 դրամ, բայց ոչ ավելի, քան 50000 դրամը (նախկինում հատկացվել է գույքի տեղափոխման գումար՝ 15000 դրամ),*
- *տարեկան 4 անգամ մշտական բնակավայր այցելելու համար տրանսպորտային ծախս միկրոավտոբուսային երթուղի լինելու դեպքում՝ միկրոավտոբուսային երթուղիների համար սահմանված սակագնի չափով, իսկ միկրոավտոբուսային եւ ավտոբուսային երթուղիներ լինելու դեպքում՝ ավտոբուսային երթուղիների համար սահմանված սակագնի չափով (նախկինում հատկացվել է ճանապարհածախսի փոխհատուցում՝ տարեկան մինչեւ 4 անգամ),*
- *բնակարանային վարձի գումար՝ ըստ մարզերի տրված սահմանաչափով (10.000-33.000 դրամ, նախկինում հատկացվել է բնակարանի վարձ՝ ամսական 10.000 դրամ),*
- *կոմունալ ծախսերի համար՝ ամսական 10.200 դրամ (նախկինում հատկացվել է կեցության այլ ծախսեր՝ ամսական 5000),*
- *վերոնշյալ հատկացումները տրամադրվում են մարզպետարանների (նախարարության ենթակայությամբ գործող հաստատության դեպքում) կողմից՝ եռամսյակային կտրվածքով:*

Տարվա մեջ առնվազն 4 անգամ ԿԳՄՍ նախարարության պաշտոնական կայքում կհրապարակվի համապատասխան հայտարարություն՝ մասնագետների գործուղման վերաբերյալ: Մասնագետների ընտրությունը կկատարվի կրթության կառավարման տեղեկատվական համակարգում (Emis.am) ձեւավորված շտեմարանից: Գործուղվող մասնագետի հետ պայմանագիր կարող է կնքվել 1 ուստարվա համար, յուրաքանչյուր մասնագետի հետ՝ առավելագույնը երկու անգամ: Ընդ որում՝ եթե թեկնածուն երեք անգամ հրաժարվում է գործուղվելու առաջարկությունից, նրա տվյալները երեք տարով հանվում են մասնագետների թեկնածուների շտեմարանից:

Հավելենք, որ նախկին կարգով՝ ՀՀ կառավարության՝ 2003 թվականի սեպտեմբերի 3-ի թիվ 1412-Ն որոշմամբ, պետական ուսումնական հաստատություններ գործուղված մասնագետների հետ կնքված պայմանագրերն իրենց ուժը կպահպանեն մինչեւ 2020-2021 թ. ուսումնական տարվա ավարտը:

Կարինե ՄԱՆՈՒԿՅԱՆ

Դիմորդ 2021

Տարեվերջյան քննությունների աշխատակարգը եւ ժամանակացույցը

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի հրամանով հաստատվել են 2020-2021 ուսումնական տարվա գիտելիքների ստուգման, պետական ավարտական քննությունների կազմակերպման աշխատակարգը եւ ժամանակացույցը:

4-րդ դասարան

Հունիսի 22-ից հուլիսի 3-ն անցկացվում է գիտելիքների ստուգում՝ հետեւյալ առարկաներից.

➢ ***«Մայրենի»*** *(գրավոր, թեստ). քննությանը տրվում է* ***60*** *րոպե-****22.06.2021թ****.*

➢ ***«Մաթեմատիկա»*** *(գրավոր, թեստ). քննությանը տրվում է* ***60*** *րոպե-****25.06.2021թ****.*

➢ *Ռուսերենով ուսուցմամբ դասարանների համար նաեւ «Ռուսաց լեզու» (բանավոր,* ***քննաշրջանի ընթացքում****):*

➢ *Ազգային փոքրամասնությունների դասարանների սովորողների համար ստուգում է կազմակերպվում նաեւ մայրենի լեզվից եւ գրականությունից (բանավոր,* ***քննաշրջանի ընթացքում****):*

Առաջադրանքները կազմվում են հաստատության մեթոդմիավորումների կողմից:

Ռուսերենով ուսուցմամբ դասարանների սովորողների համար *«Մաթեմատիկա»* առարկայի թեստերը կազմվում են ռուսերենով:

Գիտելիքների ստուգման առաջադրանքները (առնվազն 4 տարբերակ) կազմում են դպրոցների մեթոդմիավորումները՝ ըստ ԳԹԿ-ի կողմից մշակված նմուշների: Առաջադրանքների նյութն ընտրվում է ԿԳՄՍ նախարարության կողմից երաշխավորված եւ դպրոցում գործածվող դասագրքերից:

9-րդ դասարան

Հունիսի 30-ին անցկացվում է կենտրոնացված ավարտական քննություն *«Հայոց լեզու»* առարկայից (քննության տեւողությունը՝ 120 րոպե): Քննություն հանձնողների դիմում-հայտերը եւ ցուցակները դպրոցի տնօրենը լրացնում եւ ԳԹԿ է փոխանցում մինչեւ **մարտի 10**-ը:

Բացի դրանից՝ 9-րդ դասարանցիները **հունիսի 21-ից հուլիսի 5-ն** ավարտական քննություններ են հանձնում հետեւյալ առարկաներից.

➢ ***«Գրականություն»*** *՝ բանավոր-****28.06.2021թ****.,*

➢ ***«Հայոց պատմություն»*** *՝ բանավոր-****21.06.2021թ****.,*

➢ ***«Մաթեմատիկա»*** *՝ գրավոր թեստ -****24.06.2021թ****. (տեւողությունը՝* ***120*** *րոպե),*

➢ ***«Բնագիտություն»*** *(գրավոր, թեստ)՝* ***«Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Աշխարհագրություն»*** *՝սովորողիընտրությամբ,(քննության տեւողությունը՝* ***120*** *րոպե)-****05.07.2021թ****.,*

➢ ***«Օտար լեզու»*** *՝ բանավոր (****«Ռուսերեն», «Անգլերեն», «Ֆրանսերեն», «Գերմաներեն»*** *եւ այլ լեզուներ՝ սովորողի ընտրությամբ-****03.07.2021թ****.,*

➢ ***«Ֆիզկուլտուրա»*** *՝ նորմատիվների հանձնում (****քննաշրջանի ընթացքում****),*

➢ *Ռուսերենով ուսուցմամբ դասարանների սովորողները քննություն են հանձնում նաեւ «Ռուս գրականություն» առարկայից (բանավոր), իսկ ազգային փոքրամասնությունների դասարանների սովորողները՝ իրենց մայրենի լեզվից եւ գրականությունից (բանավոր):*

➢ *Ազգային փոքրամասնությունների դասարանների սովորողների համար անցկացվում է նաեւ գիտելիքների ստուգում* ***«Մայրենի լեզու եւ գրականություն»*** *առարկայից (բանավոր՝* ***քննաշրջանի ընթացքում****):*

➢ *Ռուսերենով ուսուցմամբ դասարանների սովորողների համար* ***«Մաթեմատիկա»*** *առարկայի եւ* ***«Բնագիտություն»*** *(****«Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Աշխարհագրություն»****) առարկաների թեստերը սովորողի ցանկությամբ թարգմանվում են ռուսերեն:*

➢ *Հատուկ հանրակրթական դպրոցներում սովորող երեխաները «Հայոց լեզվի» կենտրոնացված քննությունը հանձնում են իրենց դպրոցներում, իսկ ներառական կրթություն իրականացնող դպրոցներում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցողները կարող են հանձնել իրենց հաստատությունում կամ կենտրոնացված՝ ըստ սովորողի ընտրության:*

➢ ***9-րդ դասարանում ավարտական, կենտրոնացված ավարտական քննական թեստերի առաջադրանքները կազմում է ԳԹԿ-ն,*** *առաջադրանքներն ընտրվում են ԿԳՄՍ նախարարության կողմից երաշխավորված եւ դպրոցում գործածվող դասագրքերից կամ ձեռնարկներից:*

12-րդ դասարան

Հունիսի 9-23-ն անցկացվում են պետական ավարտական քննություններ՝ հետեւյալ առարկաներից.

➢ ***«Հայոց լեզու եւ հայ գրականություն»*** *(գրավոր թեստ, քննության տեւողությունը՝* ***120*** *րոպե)-****09.06.2021թ****.:*

➢ ***«Հայոց պատմություն»*** *(գրավոր, թեստ, քննության տեւողությունը՝* ***120*** *րոպե),* ***16.06.2021թ****.:*

➢ ***«Մաթեմատիկա»*** *(գրավոր թեստ, քննության տեւողությունը՝* ***120*** *րոպե),* ***23.06.2021թ****.:*

➢ ***«Ֆիզկուլտուրա»*** *(նորմատիվների հանձնում, ստուգարք,* ***հունիսի 9-ից մինչեւ քննաշրջանի ավարտն ընկած ժամանակահատվածում****):*

➢ ***«Ռուս գրականություն»*** *(բանավոր)՝ ռուսերենով ուսուցմամբ դասարանների համար:*

➢ ***«Մայրենի լեզու եւ գրականություն»*** *(բանավոր)՝ ազգային փոքրամասնությունների դասարանների համար:*

➢ *Քննության մասնակցողների ցուցակը, ըստ առարկաների, դպրոցի տնօրենը լրացնում եւ* ***ԳԹԿ*** *է փոխանցում* ***ապրիլի 1-ից մինչեւ մայիսի 1-ը****:*

➢ *Ավարտական եւ պետական ավարտական քննությունները կազմակերպվում են քննական կենտրոններում: Քննական կենտրոն են դառնում հանրակրթական հաստատությունները:*

➢ *Ավարտական եւ պետական ավարտական քննությունները սկսվում են ժամը* ***10:00****-ին: Սովորողներն ուսումնական հաստատություն են ներկայանում ժամը* ***9:00****-ին:*

➢ *Կենտրոնացված ավարտական քննությունը սկսվում է ժամը* ***11:00****-ին: Սովորողները քննական կենտրոններ են ներկայանում ժամը* ***10:00****-ին:*

Կենտրոնացված ավարտական քննությունը կազմակերպում եւ անցկացնում է ***ԳԹԿ****-ն: Քննական կենտրոնների ցանկը, կենտրոնների ղեկավարների, ԳԹԿ ներկայացուցիչների, կազմակերպիչների եւ առարկայական հանձնաժողովների անդամների ցուցակը հաստատում է ԳԹԿ տնօրենը:*

Միեւնույն առարկայից եւ՛ միասնական, եւ՛ պետական ավարտական քննություն հանձնելու դեպքում միջնակարգ կրթության ատեստատում գրվում է միասնական քննության ավարտական մասի գնահատականը (միավորը):

12-րդ դասարանում պետական ավարտական քննությունների թեստերը կազմում է ԳԹԿ-ն, առաջադրանքներն ընտրվում են ԿԳՄՍ նախարարության երաշխավորած շտեմարաններից եւ դպրոցում գործածվող դասագրքերից կամ ձեռնարկներից:

Կարինե ՄԱՆՈՒԿՅԱՆ

Միջին մասնագիտական

Քոլեջում գինի են արտադրում

Վերջին տարիներին մեծացել է հետաքրքրությունը գինեգործության ոլորտի վերաբերյալ, ինչի արդյունքում ակտիվացել է նաեւ աշխատաշուկան:

ԿԳՄՍՆ նախնական/արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթության վարչության պետ **Արտակ Աղբալյանն** ասում է, որ *«Եվրոպական կրթական հիմնադրամի»* հետ մշակվել է *«Աշխատանքի վրա հիմնված ուսումնառության ՆՄՄԿՈՒ հաստատություններին կից առեւտրային կազմակերպության ստեղծման եւ գործունեության իրականացան գնահատման հայեցակարգ»*, որի շրջանակում իրականացվելու է փորձնական ծրագիր: *«Քանի որ պետական ոչ առեւտրային կազմակերպություններն իրավունք չունեն իրականացնել որոշակի ձեռնարկատիրական գործունեություն իսկ դրա հնարավորությունները բազմաթիվ ուսումնական հաստատություններ ունեն, հայեցակարգի շրջանակում առաջարկելու ենք իրականացնել փորձնական ծրագիր եւ փոխել մի քանի ՊՈԱԿ-ների իրավական կարգավիճակը՝ դրանք դարձնելով հիմնադրամ, որպեսզի վերջիններս ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու հնարավորություն ունենան: Դա վերաբերում է ուսանողների աշխատանքների վաճառքին, որոշակի ծառայությունների մատուցմանը եւ դրանից ստացված եկամուտն արտաբյուջե մտցնելուն ու կանոնադրային նպատակների համար օգտագործելուն»*,- նշում է Արտակ Աղբալյանը՝ տեղեկացնելով, որ հայեցակարգի հաստատման հարցն առաջիկայում կմտնի ՄԿՈՒ Զարգացման ազգային խորհրդի նիստի օրակարգ եւ հավանության արժանանալուց հետո կիրականացվի:

Տարիներ առաջ Վայոց ձորի տարածաշրջանային քոլեջում ներդրվել է *«Գինեգործություն»* մասնագիտությունը, որի արդյունքում արդեն այսօր հենց քոլեջի արտադրամաս-լսարանում ուսանողները պատրաստում են գինի: Արտադրամասը քոլեջին տրամադրել է *«Անուշավան Աբրահամյան»* բարեգործական հիմնադրամը: Քոլեջում Գերմանական միջազգային համագործակցության միության (GIZ) աջակցությամբ ներդրվել է դուալ համակարգը, որը հնարավորություն է տալիս համատեղել ուսումը եւ պրակտիկան՝ կրթական գործընթացը դարձնելով առավել հետաքրքիր ու արդյունավետ:

Մեզ հետ զրույցում քոլեջի 3-րդ կուրսի ուսանող **Կարենը** պատմում է, որ հնարավորություն են ունեցել մասնակցել խաղողի բերքահավաքի եւ գինու արտադրության ողջ գործընթացին: *«Քանի որ դուալի շնորհիվ ուսման 70 տոկոսն անցնում ենք գործատուի մոտ, մեր գիտելիքներն առավելագույնս օգտագործում ենք հենց պրակտիկայում: 2018 թվականին բերքահավաքն ամբողջությամբ արել ենք մեր ձեռքերով՝ օգտագործելով խաղողի հայկական էնդեմիկ Արենի տեսակը, եւ ստացել կարմիր դառը գինի: Այն փայտե տակառում հնեցրել ենք մոտ մեկ տարի: Այսինքն՝ մասնակցել ենք գինու արտադրության ողջ գործընթացին՝ խմորման, հնեցման եւ շշալցման, ընդհուպ մինչեւ համտեսի լիարժեք պատրաստ լինելը»*,- ասում է Կարենը:

շարունակությունը՝ էջ 6

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի «Դրախտիկ գյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի աշխարհագրության (4 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը՝ (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձեւ 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից **մինչեւ մարտի 23-ը ներառյալ**, ամեն օր՝ ժամը 09:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա **մարտի 26-ին՝ ժամը 14:00-ին**, Գեղարքունիքի մարզի Դրախտիկ գյուղի միջնակարգ դպրոցում:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (094) 75-75-56 հեռախոսահամարով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ «Երեւանի Ա. Չեխովի անվան հ. 55 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի անգլերենի ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը՝ (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձեւ 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից **մինչեւ մարտի 23-ը ներառյալ**, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա **մարտի 26-ին՝ ժամը 14:00-ին**, Երեւանի Ա. Չեխովի անվան հ. 55 հիմնական դպրոցում. հասցեն՝ ք. Երեւան, Մարշալ Բաղրամյան 16:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (010) 52-64-22 հեռախոսահամարով:

Մայր Աթոռ

«Նագգաշյան մանուկների տան» մանկավարժները եւ շրջանավարտները Վեհարանում

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում հյուրընկալեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հովանու ներքո Երեւանում գործող *«Նագգաշյան մանուկների տուն»* երեխաների աջակցության կենտրոնի մանկավարժներին եւ շրջանավարտներին:

Հայցելով Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությունը՝ կենտրոնի տնօրեն տիար **Միհրան Միրիջանյանը** ներկայացրեց մանկավարժներին եւ տեղեկացրեց, որ այս անգամ Հայոց Հոր հետ հանդիպմանը ներկա են կենտրոնի՝ մայրության բերկրանքին սպասող շրջանավարտները: Տնօրենը նաեւ իրազեկեց կենտրոնում կրթադաստիարակչական գործընթացի եւ սաների խնամքի կազմակերպման մասին:

Խոսքով հանդես եկավ նաեւ կենտրոնի փոխտնօրեն **Նունե Գեղամյանը**: Վերջինս, անդրադառնալով կենտրոնի ապագայի տեսլականներին, նշեց, որ կենտրոնը տարիների ընթացքում մեծ փորձ է կուտակել եւ իր գործունեությամբ հատուկ խնամքի ոլորտում վստահելի գործընկերի համբավ ձեռք բերել, որի շնորհիվ այսօր արդյունավետորեն համագործակցում է պետական պատկան կառույցների ու հասարակական կազմակերպությունների հետ:

Այնուհետեւ ներկաներին ողջունեց եւ իր հայրական օրհնությունը բերեց Ամենայն Հայոց Հայրապետը: Նորին Սրբությունն իր բերկրանքն արտահայտեց առ այն, որ հանդիպմանը ներկա են զավակներ սպասող շրջանավարտները՝ մաղթելով Աստծու ամենախնամ Աջի մշտական ներկայությունը նրանց կյանքից ներս:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը իր մասնավոր գնահատանքը հայտնեց կենտրոնի տնօրենին տասնամյա նվիրյալ ծառայության ու մանկավարժներին իրենց նախանձախնդիր աշխատանքի համար՝ միտված վարքային խնդիրներ ու խնամքի կարիք ունեցող երեխաների աջակցությանը: Նորին Սրբությունը, վերհիշելով իր պարբերական այցերը կենտրոն եւ հանդիպումները երեխաների ու պատանիների հետ, կարեւոր եւ հանրօգուտ նկատեց կենտրոնի առաքելությունը Եկեղեցու սոցիալական ծառայությունների ընդհանուր շրջագծից ներս:

Հայրապետը նաեւ կարեւորեց այն, որ կենտրոնի աշխատակազմը շարունակում է կապ պահել շրջանավարտների հետ եւ անհրաժեշտ հոգատարություն ցուցաբերել նրանց նկատմամբ:

Վեհափառ Հայրապետն ու ներկաները կիսվեցին կենտրոնի հետ կապված հուշերով՝ մասնավոր անդրադարձ կատարելով նաեւ կենտրոնն ավարտած սաների հետագա կյանքի ընթացքին:

Այսօր կենտրոնում խնամվում է 18 սան, շրջանավարտների թիվը 20-ն է:

Քոլեջում գինի են արտադրում

սկիզբը՝ էջ 5

«Մեր ուսանողներն այսօր աշխատում են «Գետափ» գինու գործարանում եւ «Տրինիտի» ընկերությունում: Քոլեջի կարիերայի կենտրոնը, որն արդեն 10 տարի գործում է, փաստում է, որ գինեգործության ուղղությամբ մեր շրջանավարտները հիմնականում շարունակում են կրթությունը բուհերում: Առհասարակ, մեր շրջանավարտների 70 տոկոսն ընդունվում է աշխատանքի, որից 25-35 տոկոսը՝ իրենց մասնագիտությամբ: Նրանց մի մասը աշխատանքի է անցնում հենց մարզի գինու գործարաններում, օրինակ, «Տրինիտի» ընկերությունը մեր քոլեջի ուսանողին դուալ համակարգի համար առանձին սենյակ է տրամադրել՝ կրթական վերապատրաստման եւ նմանատիպ այլ աշխատանքների համար: Նա նաեւ գործարանի աշխատակից է, ապագայում՝ հաջող գինեգործ»,-ասում է քոլեջի տնօրեն **Արգամ Դովլաթյանը**: *«Քանի որ մարզերում, սովորաբար, քիչ են աշխատատեղերը, հետեւաբար ոչ բոլորն են կարողանում իրենց մասնագիտությամբ աշխատանք գտնել: Այդ պատճառով մենք քոլեջում տուրիզմի, խաղաղագործության, գինեգործության եւ փայտամշակման ուղղություններով սովորեցնում ենք նաեւ ձեռնարկատիրական հմտություններ, որպեսզի շրջանավարտները ոչ թե տարիներ շարունակ սպասեն թափուր աշխատատեղերի, այլ հիմնեն իրենց սեփական բիզնեսը»*,- վստահեցնում է նա:

Արարատի պետական քոլեջում եւս *«Գինեգործություն»* մասնագիտությունը պահանջված է՝ պայմանավորված տարածաշրջանում գինու գործարանների առկայությամբ: *«Ուսանողները սկզբում արտադրել են սպիտակ գինի՝ «Անուշա», որի անվանումը կապված է «Անուշավան Աբրահամյան» բարեգործական հիմնադրամի հետ, որը քոլեջին նվիրաբերել է գինու արտադրամասը: Լավ կլինի, որ մեր արտադրանքն արտահանենք շուկա, քանի որ թեկուզ փոքր շահույթը ֆինանսական մեծ աջակցություն կլինի քոլեջի համար»*,- ասում է քոլեջի տնօրեն **Էլլա Գասպարյանը** եւ հավելում, որ քոլեջի գինեգործության լաբորատորիայում իրականացվել է կարճաժամկետ՝ աշխատանքի վրա հիմնված ուսուցում: Նրա խոսքով՝ ծրագրի հաջողության գրավականներից մեկը մարզերում գործատուների հետ հաջող համագործակցությունն է, որն էլ իր հերթին նպաստում է աշխատաշուկայի պահանջարկին համապատասխան որակյալ մասնագետների պատրաստմանը:

Քոլեջի 4-րդ կուրսի ուսանող **Հասմիկը** պատմում է, որ վարպետ **Տիգրանի** հետ արտադրել են նաեւ կարմիր գինի՝ դառը, քաղցր եւ կիսաքաղցր: Այն արտադրվել եւ շշալցվել է Արարատյան հարթավայրի լավագույն այգիներից ընտրված *«Հաղթանակ»* խաղողի տեսակից՝ Եվրամիության կողմից ֆինանսավորվող *«Վորլդ Վիժն Հայաստան»* եւ *«Գլոբալ զարգացումներ հիմնադրամ»*-ի նվիրաբերած լաբորատորիայում:

Հեղինե ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Մայր Աթոռ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց օլիմպիադայի հաղթողներին

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում հյուրընկալեց 2019-2020 ուստարվա *«Հայոց Եկեղեցու պատմություն»* (ՀԵՊ) առարկայի հանրապետական օլիմպիադայի՝ ՀՀ մարզերից եւ Արցախից ժամանած քսանմեկ դիպլոմակիրներին եւ մի խումբ ուսուցիչների:

Հանդիպմանը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն եւ ՀԵՊ հանրապետական առարկայական հանձնաժողովի նախագահ Հոգեշնորհ **Տեր Զաքարիա ծայրագույն վարդապետ Բաղումյանը** Վեհափառ Հայրապետին ներկայացրեց օլիմպիադայի փուլային կազմակերպման ընթացքը եւ արձանագրված արդյունքները: Հայր Զաքարիան ուրախությամբ նշեց, որ 16 տարիների ընթացքում *«Հայոց Եկեղեցու պատմությունը»* դարձել է աշակերտների սիրված առարկաներից եւ իր ուրույն տեղն ունի առարկայացանկում:

Այնուհետեւ պատանիներին իր հայրական օրհնությունը եւ շնորհավորանքները բերեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Նորին Սրբությունն ընդգծեց, որ իր համար ուրախություն է տեսնել առարկայի հանդեպ ցուցաբերվող մեծ հետաքրքրությունը, ինչի վկայությունը նաեւ տարեցտարի օլիմպիադաներում արձանագրվող արդյունքներն են:

Անդրադառնալով 16 տարիներ առաջ հայրենի իշխանությունների հետ համագործակցաբար հանրակրթական դպրոցում ներդրված *«Հայոց Եկեղեցու պատմություն»* առարկայի առաքելությանը՝ Ամենայն Հայոց Հայրապետը նշեց, որ նպատակն էր մատաղ սերնդին հաղորդ դարձնել Հայոց Եկեղեցու ծոցում ստեղծված ազգային, հոգեւոր եւ մշակութային արժեքներին: Շեշտվեց, որ առարկայի դասավանդումը հայագիտական մյուս առարկաների հետ նպաստում է ազգային ինքնության եւ նկարագրի ձեւավորմանը:

Հայրապետը ընդգծեց, որ առարկայի միջոցով աշակերտներին հնարավորություն է տրվում ծանոթանալ ոչ միայն Հայոց Եկեղեցու պատմությանը եւ վարդապետությանը, այլեւ քրիստոնեական մյուս եկեղեցիներին ու տարբեր կրոններին, ինչն օգնում է հայորդիներին ճիշտ կերպով կառուցել իրենց հարաբերությունները բազմակրոն աշխարհի եւ տարբեր աշխարհայացքի տեր մարդկանց հետ:

Գարեգին Երկրորդ Կաթողիկոսը հորդորեց աշակերտներին լավ սովորել, շարունակ կրթել միտքն ու հոգին՝ իրենց գիտելիքներով, դավանած արժեքներով եւ հայրենասեր նկարագրով դառնալու ազգի արժանի զավակներ եւ նպաստելու հայրենիքի հզորացմանը, խաղաղ ու անվտանգ կյանքի կերտմանը:

Առարկայի հետագա դասավանդման շուրջ արտահայտված մտահոգություններին ի պատասխան՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը լուսաբանություններ տվեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի նախորդիվ արտահայտած կեցվածքի եւ ԿԳՄՍ նախարարության կողմից վերջերս ներկայացված մոտեցումների ոչ ընդունելի նկատվելու վերաբերյալ՝ տեղեկացնելով, որ Կրթական հարցերով ենթախումբն առաջիկա օրերին վերստին Հայոց Եկեղեցու դիրքորոշումները կհանձնի կրթության պետական լիազոր մարմնի ուշադրությանը: Այս առնչությամբ նշվեց նաեւ, որ խնդրին անդրադարձ է կատարվել նաեւ օրեր առաջ գումարված Գերագույն հոգեւոր խորհրդի ժողովում:

Հանդիպման ավարտին օլիմպիադայի հաղթողները Վեհափառ Հայրապետից ստացան նվերներ, ապա ուսուցիչների ուղեկցությամբ այցելեցին Մայր Աթոռի թանգարաններ:



Մեդեա ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Հայ կատարողական երաժշտարվեստը ծանր կորուստ կրեց. վախճանվեց ՀՀ Ժողովրդական արտիստ, ՀԽՍՀ պետական մրցանակի դափնեկիր, Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր, անվանի թավջութակահարուհի

Մեդեա Վարդանի ԱԲՐԱՀԱՄՅԱՆԸ:

Մեդեա Աբրահամյանը հայ երաժշտարվեստի երախտավորներից է, ում հարուստ եւ բովանդակալից ստեղծագործական կյանքն արվեստի նվիրական ծառայության վառ դրսեւորում է:

անվանի թավջութակահարուհու ճակատագրի առաջին կանխագուշակը եղել է կոմպոզիտոր, հասարակական գործիչ, Կոնսերվատորիայի առաջին ռեկտոր Ռոմանոս Մելիքյանը: Ճակատագրական է եղել նաեւ Մեդեա Աբրահամյանի հանդիպումը դիրիժոր Կոնստանտին Սարաջեւի հետ:

1941-1950 թթ. նա սովորել է Երեւանի Չայկովսկու անվան երաժշտական դպրոցում (Կոնստանտին Խիզանյանի եւ Լեւոն Գրիգորյանի դասարան): 1950-1953 թթ. թավջութակահարուհին ուսանել է Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում (պրոֆեսոր Լեւոն Գրիգորյան): 1953 թ. Մ. Աբրահամյանը մասնակցել է Բուխարեստի երիտասարդության եւ ուսանողության 4-րդ համաշխարհային փառատոնին: Ժյուրիի կազմում է եղել մեծանուն երաժիշտ, թավջութակահար, Մոսկվայի Պ. Չայկովսկու անվան կոնսերվատորիայի պրոֆեսոր Մստիսլավ Ռոստրապովիչը, ով Մեդեային առաջարկել է ուսումը շարունակել Մոսկվայում՝ իր մասնագիտական դասարանում:

Բազմաթիվ միջազգային մրցույթների դափնեկիր թավջութակահարուհի Մեդեա Աբրահամյանն իր մասնագիտական գիտելիքները փոխանցում էր Կոմիտասի անվան կոնսերվատորիայում՝ տալով բազմաթիվ շրջանավարտ-դափնեկիրներ:

Պրոֆեսոր Մեդեա Աբրահամյանն արժանացել է Հայաստանի Հանրապետության պետական եւ կառավարական բարձր պարգեւների:

Նրա պայծառ հիշատակը վառ կմնա գործընկերների, մտերիմների, երաժշտասեր հասարակության սրտերում:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Տավուշի մարզի «Դիլիջանի հ. 4 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի ֆիզկուլտուրայի (12 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Չեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը՝ (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Չեւ 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաս-տաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից **մինչեւ մարտի 23-ը ներառյալ**, ամեն օր՝ ժամը 10:00-ից 14:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա **մարտի 26-ին՝ ժամը 14:00-ին**, Տավուշի մարզի Դիլիջանի հ. 4 հիմնական դպրոցում. հասցեն՝ Տավուշի մարզ, ք. Դիլիջան, Շահումյան 6:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (0268) 2-26-07 կամ (0268) 2-26-08 հեռախոսահամարներով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Արմավիրի մարզի վաղարշապատի տարածաշրջանի «Բաղրամյանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի հայոց լեզվի եւ գրականության (7 դասաժամ), ֆիզկուլտուրայի (20), երաժշտության (10) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

